ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգիական գիտ. XVIII, № 8, 1965 Биологические науки

ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1965 թվի հունիսի 8-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի բնության պահպանության ընկերության III համագումարը։ Հաշվետու զեկուցումով հանդես եկավ ընկերության նախագահ՝ պրոֆ. Խ. Պ. Միրիմանյանը։

Իր զեկուցման մեջ ընկեր Միրիմանյանն ասաց.

—Երկրի բնական հարստությունների խնայողաբար օգտագործումը, բնական ռեսուրսների վերարտադրումը, հարստացումն ու պահպանումը ունեն խոշոր նշանակություն։ Անտառային ու հողային ռեսուրսների, ջրերի ու բուսականության, կենդանական աշխարհի ու օգտակար հանածոների օգտագործման հետ մեկտեղ, անհրաժեշտ է լուրջ կերպով մտածել նրանց պահպանության ու վերարտադրման մասին։

1958 թ. մայիսի 14-ին Հայկական ՍՍՌ Գերագույն սովետն ընդունեց Հայաստանի բրնության պահպանության օրենքը, ըստ որի պետական պաշտպանության տակ են առնվել ռեսպուբլիկայի բոլոր բնական հարստությունները։

Բնության պահպանության գործը ժամանակակից ամենալուրջ պրոբլեմներից մեկն է և այնքան բարդ ու բազմակողմանի է, որ առանց աշխատավորական լայն մասսաների մասնակցության այն հնարավոր չէ լուծել։

Հաշվետու ժամանակաշրջանում ընկերությունն իր շուրջն է համախմբել հայրենի բրնության բարեկամների մի ստվար բանակ, որը բաղկացած է 200 հազար շարքային և 2061 իրավաբանական անդամներից, այդ թվում բրնական հարստությունների օգտագործման գործով շահագրգռված հիմնարկ-ձեռնարկություններ, ինստիտուտներ, բուհեր և այլն։

Իրավաբանական անդամ հանդիսացող հիմնարկ-ձեռնարկություններում ստեղծված են ընկերության 1166 սկզբնական կազմակերպություններ կամ բջիջներ։

Աշխատանքը տեղերում կազմակերպելու նպատակով ստեղծված են 41 քաղաքային ու շրջանային բաժանմունքներ։

Ընկերության նախագահության կից ստեղծված են ֆաունայի պահպանության, ծաղկաբուծության, ակվարիումների, անտառային, պատանի բնասիրների սեկցիաներ։

Մի շարք պետական այլ որոշումներ մասսայականացնելու և շրջանների հետ կապելու նպատակով, Լենինականում, Գորիսում, Դիլիջանում, Մեղրիում, Արտաշատում, Կալինինոյում, Երևանում և այլ վայրերում կազմակերպվել են 32 գիտական սեսիաներ ու կոնֆերանսներ։ Այս տարի նախատեսված է նման սեսիաներ կազմակերպել Նոյեմբերյանում, Վեդիում, Էջմիածնում ու Հոկտեմբերյանում։

Ընկերության նախագահությունը կազմակերպել է բնության պահպանությանը նվիրված բազմաթիվ խորհրդակցություններ ու զեկուցումներ՝ բուհերում, դպրոցներում, լուսաշխի տանը՝ բժշկական ու մանկավարժական աշխատողների հետ։

Ընկերությունը կազմակերպել է նաև Սովետական Միության մեջ բնության պահպանության առաջին հասարակական համալսարանը, որտեղ հատուկ ծրագրով բնագիտության տարբեր պրոբլեմների շուրջը կարդացվել են դասախոսություններ։

Նկատի ունենալով, որ աշխատավորության դաստիարակությունը բնության պահպանության ոգով առաջին հերթին պետք է սկսել մատաղ սերնդից, ընկերությունը լուրջ ուշադրություն է դարձնում դպրոցներում տարվող աշխատանքներին։

Ընկերությունը, ժամանակ առ ժամանակ ուսումնասիրում է ռեսպուբլիկայի դպրոցները, թերություններ հայտնաբերում բիոլոգիայի ու բնագիտության ուսուցման ասպարեզում, ապա մշակում և կիրառում է կոնկրետ միջոցառումներ՝ դպրոցական դասընթացը շրջապատի բնության ու կոնկրետ կյանքի հետ կապելու, կենդանի բնության անկյուններ դպրոցներում ստեղծելու, երեխաներին կանաչապատման, կենդանիների ու երգեցիկ թռչունների խնամքի, շրջապատի կանաչ տնկարկների պահպանության գործին մասնակից դարձնելու և այլ ուղղությամբ։ Ընկերության շարքերում ընդգրկելով մեծ թվով դպրոցներ, տեղերում կազմակերպվել են դպրոցական բջիջներ, որոնց աշխատանքները ղեկավարում են բնագիտության դասատուները։

Ընկերությունը սիստեմատիկ կերպով կազմակերպում է ծաղիկների ցուցահանդես, որին

մասնակցում են ռեսպուբլիկայի տարբեր քաղաքներ։

Հոկտեմբերյանում ու Աշտարակում ստեղծված են երջանկության այգիներ, որտեղ ամուսնացողները և Լենինյան կոմերիտմիության մեջ ընդունվողները մեկական կույտ ծառ են տնկում։

Ընկերության նախագահությունը քննել է արտեկյան ջրերի ռացիոնալ օգտագործման հարցը։ Ռեսպուբլիկայում 1200 հորատանցք է փորված, 600-ից ջուրը աներեսատ հոսելով, ճահճանում ու աղիացնում է կուլտուրական դաշտերը և նվազեցնում ռեսպուբլիկայի ստորերկրյա ջրերի պաշարները։ Հարց է հարուցվել կառավարության առջև հորատանցք փորելու իրավունքը խիստ սահմանափակել, եղածների օգտագործումը արգելել և վերջ տալ ջրերի անտնտեսվար օգտագործմանը։

Հատուկ սեսիայում լուրջ կերպով քննարկվել է ռեսպուբլիկայի ոռոգման ցանցի շահագործման վիճակը ու ոռոգող ջրի կորուստների դեմ պայքարելու և, ռեսպուբլիկայի ջրային ռեսուրսների օգտագործման օգտակար գործակիցը բարձրացնելու նպատակով, մի շարք կոնկրետ առաջարկություններ են մտցրել Մինիստրների սովետ։

Մի այլ սեսիայում բնության պահպանության հանձնաժողովի հետ միասին լսվել և լայնորեն քննարկվել է արդյունաբերական թափթրփուկների, գազերի արտանետումներով օդն ու ջուրը աղտոտելու և թունավորելու հարցը։

Նախագահությունը քննել է ձկնորսական տնտեսության բարելավման, Արփա լճում, Սև ջրում, Այրդր լճում արդյունաբերական ձկան որսը վերականգնելու, այդ գործը որսագողերից պաշտպանելու, կոլտնտեսություններում արհեստական լճակներ ու ձկնաբուծություն կազմակերպելու հարցը։ Քննվել է կենդանաբանական այգու աշխատանքները և օգնության կարգով հարց հարուցվել հնարավորություն տալ նրան հատուկ էքսպեդիցիայի միջոցով Հայաստանի շրջաններից հավաքելու ռեսպուբլիկայի տեղական ֆաունան ու հարստացնելու կենդանաբանական այգին, նախագահությունը միաժամանակ զբաղվում է նրա տերիտորիայի անտառապատման հնարավորությունը ընդլայնելու հարցով, փորձում է օգնել ավելի լայն հիմքերի վրա դնելու ֆաունայի պրոպագանդան, կապելով դպրոցները կենդանաբանական այգու հետ և այլն։

Քննության է առնված ռեսպուբլիկայի մի շարք բուհերում բնության պահպանության դասընթաց անցնելու հարցը, Մոսկվայի հանձնարարությամբ կազմվել է հատուկ ծրագիր միութենական բուհերի համար, որի բազայի վրա միջազգային ֆեդերացիայի կողմից մշակվել է ընդհանուր ծրագիր՝ աշխարհի բոլոր պետությունների համար։ Մեր բարեկամ պետություններում կան բնության պահպանության ֆակուլտետներ, ամբիոններ, հատուկ դպրոցներ, մեզ մոտ պետք է կազմակերպել գոնե սիստեմատիկ դասընթացներ, որոնք չափազանց անհրաժեշտ են առաջին հերթին մանկավարժական կադրեր պատրաստող բուհերում։ Մինչ այժմ որոշ թվով դասախոսություններ կարդացվել են պետհամալսարանում, գյուղատնտեսական ինստիտուտում և այլ բուհերում։

Ընկերության գործունեությունը դուրս է եկել ռեսպուբլիկայի սահմաններից՝ բնության պահպանության հանձնաժողովի հետ միասին ընկերությունը ակտիվ կերպով մասնակցել է բնության պահպանության հարցերին նվիրված անդրկովկասյան երկու խորհրդակցությունների՝ Վրաստանում, որտեղ հանդես է եկել մի շարք զեկուցումներով։ Այդ խորհրդակցություններում լսվել ու քննարկվել են անդրկովկասյան երեք ռեսպուբլիկաների անտառային տնտեսության, լեռնային արոտների, լեռնալանջերի հողերի, կենդանական աշխարհի, հանքային հարստությունների և այլ կարևոր հարցերի վիճակին, նրանց պահպանության ու ռացիոնալ օգտագործման հարցերին նվիրված 25 գիտական զեկուցումներ։ Ընկերության ներկայացուցիչները մասնակցել են նաև Մոսկվայում, Մինսկում, Ռիգայում, Տալլինում, Կիևում կայացած՝ բնության պահպանության մի շարք համամիութենական խորհրդակցությունների, հանդես գալով զեկուցումներով կամ ընդարձակ ելույթներով։

Հաշվետու ժամանակաշրջանում ընկերությունը մասնակցել է Իտալիայում և Ռումինիայում կայացած միջազգային կոնգրեսներին, որտեղ Սովետական Միության պատվիրակության կողմից զեկուցում է արվել հողերի պահպանության վերաբերյալ։

1964 թվականին Մոսկվայում միութենական բնության պահպանության հանձնաժողովը լսեց մեր ընկերության գործունեության հաշվետվությունը և լավ գնահատականի արժանացրեց նրա աշխատանքը։

Իր հաշվետվության վերջում ընկ. Միրիմանյանը խոսեց ընկերության անելիքների մասին։

Ամենից առաջ լուրջ խնամքի, հոգատար վերաբերմունքի ու պաշտպանության կարիք են զգում մեր կանաչ տարածությունները, Երևանը շրջապատող, Նորքի և այլ անտառները, Ծիծեռնակաբերդը, որոնց ստեղծման համար հսկայական միջոցներ ու մարդկային ուժ է ծախսված տարիների ընթացքում։ Այնուհետև պետք է վերջ տալ Իջևանի, Շամշադինի, Ալավերդու, Դիլիջանի և այլ անտառների հանդեպ եղած անտեր-

անվար վերաբերմունքին, գերահատումներին, անասուններ արածացնելուն, պետք է բարելավել անտառների հիվանդությունների դեմ պայքարելու և անտառները հրդեհներից պաշտպանելու գործը։ Լուրջ կերպով պիտի դնել մեր կուրորտների բարեկարգման, նրանց հնարավորություններն ու հանքային ջրերը ավելի լայն չափով օգտագործելու հարցը։

Եթե կերպով պետք է պայքարել հանցագործ տարրերի դեմ, որոնք անխնա փչացնում են բուսականությունը, տնկարկները։ Պետք է միջոցներ ձեռք առնել արդյունաբերական կենտրոններում օդն ու ջուրը թունավոր գազերից, ծխից, փոշուց, արդյունաբերական թափթփուկներից պաշտպանելու ուղղությամբ։ Մեծ շարիք է մեզ մոտ հանցագործ արսագողությունը, անօրինական հանապարհով արգելված վայրերում որս անելը, թունավոր ու պայթուցիկ նյութերով ձուկ որսալը։

Անհրաժեշտ է կազմակերպել կարավանների, փաստաթղթերի, այծյամների արհեստական բուծման գործը ռեսպուբլիկայում, լուրջ հիմքի վրա դնել մեր արգելանոցների գիտական ու կուլտուրական աշխատանքը։

Անհրաժեշտ է բնակերության մեջ բեղդրկել ռեսպուբլիկայի դեռ դուրս մնացած բոլոր դրոցներն ու մանկապարտեզները, սովխոզները և այլն, դպրոցներում կազմակերպել կենդանի բնության անկյուններ, գյուղական ակումբներում՝ բնագիտական թանգարաններ և այլ ձեռնարկումներ։